Ասպիրանտուրա ընդունելության գիտական ռեֆերատի նկատմամբ ներկայացվող հիմնական պահանջներ

Գիտական ռեֆերատը պետք է բաղկացած լինի առավելապես վերլուծական բաղադրիչից: Պարունակի ամբողջական, ինքնուրույն, ավարտուն հետազոտություն՝ միմյանց տարմաբանական շարվածքով՝ փաստելով դիմորդի մասնագիտական պատրաստվածության և ինքնուրույն հետազոտություն իրականացնելու կարողությունը:

Գիտական ռեֆերատը ներկայացվում է տպագիր՝ նվազագույնը **20** էջի սահմաններում:

Ասպիրանտուրայի բաժին անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման ժամանակ պահանջվում է գիտական ռեֆերատի տպագիր տարբերակը: Այնուհետև aspirantura@asue.am կամ aspirantura.phd@outlook.com էլ. հասցեին պետք է ուղարկել նաև համակարգչային շարվածքի էլեկտրոնային (PDF ֆորմատով) տարբերակը:

Գիտական ռեֆերատի կառուցվածքի հիմնական տարրերն են՝

- **Տիտղոսաթերթ (Title page):**
- **Համառոտագիր (abstract):** Համառոտագիրն աշխատանքի ընդհանրական ամփոփումն է, որը համախմբում է իրականացված հետազոտությունն ու շաղկապում դրա առանձին բաժինները: Այն ներկայացնում է հետազոտության հիմնական բովանդակությունն ու ստացված արդյունքները: Համառոտագիրն անհրաժեշտ է շարադրել հակիրճ, սակայն բովանդակալից՝ միմյանց տրամաբանական շարունակությունը հանդիսացող հստակ ձևակերպումներով: Համառոտագրում չի թույլատրվում օգտագործել աղյուսակներ և գծապատկերներ, ինչպես նաև կատարել հղումներ: Բառերի քանակը պետք է լինի միջինը 150-200 բառ:
- **Ներածություն (Introduction):** Այս բաժնում հիմնավորել հետազոտության արդիականությունը, նպատակը և խնդիրները, ազդեցության շրջանակը,

լուծման ուղիների և մեթոդների կիրառման նպատակահարմարությունը, ինչպես նաև ակնկալվող արդյունքը, վարկածների առաջադրումն ու դրանց ստուգման ուղիների հակիրճ և հստակ նկարագրումը: Ներածությունը պետք է արտահայտի թեմայի կիրառական նշանակությունը՝ ունենալով մեթոդաբանական և տեսական ամուր հենք: Ներածությունն ամփոփել եզրահանգմամբ (նվազագույնը 3 էջ):

- **Գրականության ակնարկ (Literature review):** Գրականության ակնարկը հետազոտության թեմայի վերաբերյալ գիտական գրականության ուսումնասիրությունն է և հանդիսանում է հետազոտության շրջանակներում արծարծված խնդիրների լուծման ուղղությամբ այլ հետազոտողների կողմից մինչ այդ իրականացված վերլուծությունների ընդհանրացում (հետազոտություններ, հոդվածներ, հրապարակումներ, թեզեր, մենագրություններ և այլն):
- **Հետազոտության մեթոդաբանություն (Research methodology)** բաժնում համառոտ կերպով նկարագրվում են ինչպես հետազոտության իրականացման գիտականորեն հիմնավորված և լայն կիրառություն ունեցող, այնպես էլ հեղինակի կողմից առաջարկված սեփական մեթոդաբանությունը, եթե այդպիսին առկա է:
- **Վերլուծություն և արդյունքներ (Analysis and Findings)** բաժնում ներկայացվում են հետազոտության ընթացքում ստացված կիրառական կամ տեսական բնույթի տվյալները: Համապարփակ վերլուծությանը պետք է հաջորդի իրականացված հետազոտության արդյունքների ու բացահայտումների նկարագրումը: Ցանկալի է ստացված արդյունքները ներկայացնել գծապատկերների, աղյուսակների, գրաֆիկների և սխեմաների կիրառմամբ:
- **Եզրակացություն (Conclusion)**, որտեղ շեշտադրվում է ներածությունում նշված խնդիրների լուծման հեղինակային տեսլականը: Խորհուրդ է տրվում կրկին

անդրադառնալ հետազոտության իրականացման նպատակին, արդիականությանը, առաջադրված խնդրին և վարկածներին՝ ստացված արդյունքի հետ դրանք համադրելու համար: Եզրակացության մեջ պետք է համառոտ և հստակ ամփոփել հետազոտական աշխատանքի բացահայտումները, որոնք մինչ հետազոտության իրականացումն անհասանելի էին ընթերցողների համար, ինչպես նաև ներկայացնել, թե հետազոտության արդյունքները որքանով են լրացնում առկա գրականության բացթողումները և այլ հարակից ինչպիսի խնդիրների կարող են լուծում տալ: Եզրակացության մեջ ընդգծվում է հետազոտության խնդրի հաստատումը կամ հերքումը, քննարկվում արդյունքի նշանակալիությունը, ցույց տրվում, որ հետազոտողը պատասխանել է իրեն առաջադրված հարցերին և ստուգել իր կողմից առաջ քաշված վարկածները:

- **Գրականության ցանկ (Reference list)**. դրանք տալ ինչպես հղումներում, այնպես էլ վերջում՝ ցանկով ու ամբողջական ելակետային տվյալներով (նվազագույնը 15 անուն):

<u>Տեխնիկական պահանջներ</u>.

A4 ֆորմատի թղթի համակարգչային շարվածքով հայերեն շարադրանք (վերևից՝ 2 սմ, ներքևից՝ 2.5 սմ, ձախից 3 սմ, աջից 1.5 սմ, տառատեսակ – Armenian Unicode /GHEA Grapalat/, տառաչափ 12, միջտողային տարածությունը 1.5 սմ)